

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԱՂԱՒՆԻ ՄԱՅՐԱՊԵՏ ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆԻ

Շարաթ, 28 Օգոստոսի երեկոյան, Ս. Հրեշտակապետաց վանքի իր խուցին մէջ իր աչքերը յաւիտենօրէն փակեց Ս. Աթոռոյս երիցագոյն Մայրապետ Քոյր Աղանի ձէվահիրճեան: Հանգուցեալը յառաջացեալ տարիքի բերումով առնէ մը ի վեր կը գտնուէր արդէն հիւանդագին վիճակի մէջ: Մահը արդիւնքն էր սրտի յանկարծահաս տաղձապի:

Աղանի Մայրապետ ծնած էր Սեբաստիա, 1898ին: Տարագրութեան զոհ տուած էր իր ամուսինը, իսկ իր միակ զաւակը՝ ինքնաշարժի արկածի մը, Հալէպի մէջ:

Մնալով առանձին, եկած էր Երուսաղէմ 1933ին: 1948ին գիմած էր և բնդունուած Ս. Աթոռոյս Մայրապետներու շարքին, ուր աւելի քան քառորդ դարու բնթացքին ըրած էր իր լաւագոյնը, իր ուժերուն ներած չափովը, օգտակար ըլլալու համար այս Հաստատութեան: Կը մեռնի՝ հեղահամըոյ ու պարտաճանաչ Մայրապետի մը բարի յիշատակը ձգելով իր ետին:

Հանգուցեալին յուղարկաւորութիւնը կատարուեցաւ յաջորդ օր, Կիւսկի, 29 Օգոստոս, Ս. Կոյսի Վերափոխման տօնին, ճիշդ կէսօրուան ժամուն: Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ, Ձարչարանաց խորանին առջև կատարուած այդ արարողութենէն ետք, վանքի Տեսուչ Հոգչ. Տ. Մեան Վրդ. Ղարիպեանի գլխաւորութեամբ և բովանդակ Միաբան Հայրերու մասնակցութեամբ, յուղարկաւորութեան թափօրը ուղղուեցաւ Ս. Փրկչի Ազգային Գերեզմանատունը, ուր ամփոփուեցաւ աստապակոծ մարմինը հանգուցեալին:

Տէրը յաւիտենական հանգիստ պարգևէ իր բարի հոգիին:

